Արձանագրություն N 3
«ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք.Երևան «16» «հոկտեմբերի» 2017թ.
ժ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Մարտիրոսյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Մեժլումյանը
Ռ. Առաքելյանը
Ա. Բաբյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Գաբրիելյանը
Բացակա՝ Կ. Համբարձումյան

Ի. ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-17/1 ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորումը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին
(Հ. Մարտիրոսյան)

Ընդունել ի գիտություն, որ.

- Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ «ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ն, 09.10.2017թ. ծանուցվել է հայտով առաջարկված ապրանքների ամբողջական նկարագիրը ներկայացնելու մասին:
- 09.10.2017թ. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում՝ եթե ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին չի տրամադրում հարցման մասին եզրակացություն, ապա մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:
- ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից հարցման մասին եզրակացությունը սահմանված ժամկետներում տրամադրվել է:
- «ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից հայտով առաջարկված ապրանքների ամբողջական նկարագիրը ներկայացվել է հրավերով սահմանված ժամկետներում:
- Հանձնաժողովի քարտուղարի կողմից 13.10.2017թ. առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացությունը տրամադրվել է հանձնաժողովի անդամներին:
- Մասնակցի՝ հայտով առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրի և Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացության գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից անհամապատասխանություն չի արձանագրվել (հայտնաբերվել):
- Հանձնաժողովի կողմից լրացված գնահատման թերթիկներում Մասնակցի՝ հայտով առաջարկված ապրանքների ամբողջական նկարագիրը և Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ գնահատվել են բավարար:

2. Հայտարաություն պայմանագիր կնքելու որոշման մասին
(Հ. Մարտիրոսյան)

Հանձնաժողովը որոշեց.

- Ընտրված մասնակից ճանաչել 1-ին չափաբաժնով՝ «ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ին.

Ընտրված մասնակիցը ճանաչվել է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով.

- հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը

- ընտրված մասնակիցների հետ պայմանագիր կնքել Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Հ. Մարտիրոսյան

Անդամներ՝ _____ Մ. Մեժլումյան

_____ Ռ. Առաքելյան

_____ Ա. Բաբայան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ա.Գաբրիելյան